«Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Բովանդակություն

Ղեկավարության հայտարարությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ 3

Անկախ աուդիտորական եզրակացություն 4

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 7

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 8

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 9

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 10

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 11

Ղեկավարության հայտարարությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ

Ղեկավարությունը պատասխանատու է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Խումբ» կամ «Ցե-Կվադրատ») 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակը, այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված գործունեության արդյունքները, դրամական հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Տեղեկատվության, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության ներկայացման համար այնպիսի եղանակով, որն ապահովում է տեղին, հուսալի, համադրելի և հասկանալի տեղեկատվության տրամադրումը,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների առանձին պահանջների հետ համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Խմբի ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ազդեցության մասին, և
- Անընդհատության հիմունքով գործունեությունն իրականացնելու Խմբի կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Խմբում ներքին հսկողության արդյունավետ և հուսալի համակարգ նախագծելու, ներդնելու և կիրառելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրառումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Խմբի գործառնությունները ներկայացնելու և պարզաբանելու և ցանկացած պահի Խմբի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կտան ղեկավարությանը հավաստիանալու, որ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Խմբի ակտիվների անվտանգության ապահովման ուղղված ողջամիտ քայլեր ձեռնարկելու համար և
- Խարդախության դեպքերի և այլ խախտումների կանխարգելման և հայտնաբերման համար:

Խմբի 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները ղեկավարության կողմից հաստատվել են 2026թ. մարտի 31-ին:

Ստորագրված է Խմբի ղեկավարության անունից՝

Արման Վարդանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Հեղինե Աղիլխանյան
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպության («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՍՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՍՄ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ, և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների: Մենք կատարել ենք նաև էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ որպես մեկ ամբողջություն, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների ողջամտությունը:

– եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզնից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

– գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

– պլանավորում և իրականացնում ենք խմբի աուդիտը խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ բիզնես միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու համար՝ որպես հիմք խմբի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի նպատակով իրականացվող աուդիտորական աշխատանքների ուղղորդման, ղեկավարման և ստուգման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է այս աուդիտորական եզրակացությունը, Լուսինե Սարդարյանն է:

Լուսինե Սարդարյան
Աուդիտորական առաջադրանքի
ղեկավար

Իրինա Գևորգյան
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի
տնօրեն, Ղեկավար գործընկեր

KPMG Armenia

«Քեյ-Փի-Էմ Արմենիա» ՍՊԸ
31 մարտի 2026թ.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ»
«KPMG ARMENIA»
02529689

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	333,150	333,260
Բանկային ավանդներ		-	958,834
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	3,455,910	1,716,047
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10	104,600	90,318
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	13	112,736	99,255
Հետաձգված հարկային ակտիվներ	9	51,629	38,838
Տրամադրված փոխառություններ		58,529	30,268
Այլ ակտիվներ	11	567,266	431,003
Ոչ ընթացիկ ակտիվներ		**4,683,820**	**3,697,823**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	14	650,000	650,000
Չբաշխված շահույթ		2,946,075	2,173,018
Ընդամենը սեփական կապիտալ		**3,596,075**	**2,823,018**
Պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	13	122,664	111,238
Շահութահարկի գծով վճարվելիք գումարներ		435,288	333,806
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված տոկոսներ	16	529,793	429,761
Ընդամենը պարտավորություններ		**1,087,745**	**874,805**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**4,683,820**	**3,697,823**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 34-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2025թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2025թ.	2024թ.
Եկամուտ կառավարման վճարներից	6	5,673,663	4,427,913
Տոկոսային եկամուտ		28,050	29,111
Այլ եկամուտ		2,941	271
Զուտ օգուտ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով	18	296,288	201,100
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		4,186	2,455
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	7	(316,075)	(275,328)
Զուտ վնաս արտարժութային գործառնություններից		(11,701)	(13,829)
Օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերություններից		60,781	(79,973)
Ֆինանսական ծախսեր		(11,656)	(14,961)
Վարչական և այլ ծախսեր	8	(2,461,313)	(1,903,370)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**3,265,164**	**2,373,389**
Շահութահարկի գծով ծախս	9	(529,107)	(410,360)
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ		**2,736,057**	**1,963,029**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. մարտի 31-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արման Վարդանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Արթուր Հարությունյան
«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2025թ. համար

հազ. դրամ	**Կանոնադրական կապիտալ**	**Չբաշխված շահույթ**	**Ընդամենը սեփական կապիտալ**
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	650,000	2,309,989	2,959,989
Տարվա ընդամենը համապարփակ եկամուտ	-	1,963,029	1,963,029
Հայտարարված և վճարված շահաբաժիններ (Ծնթգ. 14)	-	(2,100,000)	(2,100,000)
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**650,000**	**2,173,018**	**2,823,018**
Տարվա ընդամենը համապարփակ եկամուտ	-	2,736,057	2,736,057
Հայտարարված և վճարված շահաբաժիններ (Ծնթգ. 14)	-	(1,963,000)	(1,963,000)
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**650,000**	**2,946,075**	**3,596,075**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 34-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2025թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2025թ.	2024թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված կառավարման վճարներ		5,527,498	4,381,913
Ստացված վճարներ և միջնորդավճարներ		4,326	2,455
Ստացված տոկոսներ		38,023	24,497
Վճարված աշխատավարձ և հարակից ծախսեր		(553,680)	(492,602)
Վճարված կոմիսիոն ծախսեր		(310,446)	(270,822)
Արտարժույթով գործարքներ		(11,701)	(13,829)
Վճարված կանխավճարներ և գործառնական ծախսեր		(1,734,737)	(1,306,591)
Վճարված շահութահարկ		(440,417)	(378,285)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**2,518,866**	**1,946,736**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ներդրումներ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներում		(2,380,056)	(442,232)
Մուտքեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների մարումից		934,575	1,155,001
Հիմնական միջոցների ձեռքբերում		(53,712)	(9,934)
Ներդրումներ ժամկետային ավանդներում		(249,960)	(976,805)
Ժամկետային ավանդների մարում		1,257,498	703,055
Տրամադրված փոխառություններ		(41,000)	(39,000)
Տրամադրված փոխառությունների մարում		13,337	9,000
Ներդրումային գործունեության համար (օգտագործված)/ ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**(519,318)**	**399,085**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վարձակալության գծով պարտավորությունների հիմնական մասի մարում	13	(34,336)	(30,369)
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսի վճարում	13	(11,804)	(13,675)
Վճարված շահաբաժիններ	14	(1,963,000)	(2,100,000)
Մուտքեր կարճաժամկետ փոխառություններից		-	20,000
Կարճաժամկետ փոխառությունների մարում		-	(20,000)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(2,009,140)**	**(2,144,044)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**(9,592)**	**201,777**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		333,260	129,657
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		9,482	1,826
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	12	**333,150**	**333,260**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 34-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2025թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ծանոթագրություն	Էջ
1. Ընդհանուր տեղեկատվություն	12
2. Պատրաստման հիմունքներ	14
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	14
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	14
5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի փոփոխություններ	15
6. Եկամուտ կառավարման վճարներից	15
7. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	15
8. Այլ գործառնական ծախսեր	16
9. Շահութահարկ	16
10. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	18
11. Այլ ակտիվներ	19
12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19
13. Վարձակալություն	19
14. Կապիտալ և պահուստներ	20
15. Կապիտալի կառավարում	21
16. Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված ծախսեր	21
17. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	22
18. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով	22
19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	22
20. Հանձնառություններ	26
21. Պայմանական դեպքեր	27
22. Կապակցված կողմեր	27
23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր	28
24. Չափման հիմունքներ	28
25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր	28
26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	34

1. Ընդհանուր տեղեկատվություն

(ա) Կառուցվածքը և գործունեությունը

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն («Ընկերություն») և Ցե-Կվադրատ Ամպեգա սոցիալական ներդրումային ֆոնդը («Դուստր կազմակերպություն») միասին կազմում են Խումբ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը պատկանում է Դուստր կազմակերպության բաժնեմասերի 100%-ը (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 100%):

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2013թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերությունը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում («ՀՀ ԿԲ») որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ և ստացել է թիվ 3 լիցենզիան: Խմբի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հանրապետության 37:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կարգավորող մարմիններն են՝ Մասնակիցների ընդհանուր ժողովը, Դիտորդ խորհուրդը և Գլխավոր գործադիր տնօրենը, որի պաշտոնը զբաղեցնում է Արման Վարդանյանը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 17 աշխատակից (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14 աշխատակից):

Ընկերությունը կառավարում է ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՀՀ ԿԲ-ի կողմից տրված լիցենզիայի համաձայն:

Ղեկավարության վարձատրության չափը որոշվում է համապատասխան կառավարող մարմնի որոշմամբ: Խմբի Խորհուրդը իրականացում է Խմբի գործունեության ընդհանուր կառավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնց համար պատասխանատու է միայն Մասնակիցների ընդհանուր ժողովը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Խմբի մասնակիցներն են «Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ» ՍՊԸ-ն (74.9%) (գրանցված Շտուբենռինգ 20, 1070 Վիեննա, Ավստրիա հասցեով, գրանցման համար՝ FN 55148a) և «Ամպեգա Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն (25.1%) (գրանցված Շառլ դը Գոլի փլաթց 1, 50679 Քյոլն, Գերմանիա հասցեով, գրանցման համար՝ HRB 61047): Խմբի մասնակիցների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 14-ում:

«Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ» ՍՊԸ-ի բաժնեմասերը (100.00%) պատկանում են «Ցե-Քյու Ինվեսթմենթ Գրուփ» ՍՊԸ-ին (նախկին՝ Cubic (London) Limited (United Kingdom) ընկերություն): «ՑեՔյու Ինվեսթմենթ Գրուփ» ՍՊԸ-ի բաժնեմասերը պատկանում են MVJ GmbH & Co KG ընկերությանը (74.9%) և չորս այլ ոչ խոշոր բաժնետերերի: 20%-ից ավել բաժնեմասին տիրապետող՝ Խմբի վերջնական հսկող կողմերն են Alexander Schütz & Family (38% բաժնեմաս MVJ GmbH & Co KG ընկերությունում) և Cristobal Mendez de Vigo zu Loewenstein (37% բաժնեմաս MVJ GmbH & Co KG ընկերությունում):

Ընկերությունը ֆոնդերի կառավարիչ է և իրականացնում է հետևյալ պարտադիր կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի կառավարումը՝

- Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ,
- Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ,
- Ցե-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ,
- «Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդ,
- Ցե-Կվադրատ Ամպեգա սոցիալական ներդրումային ֆոնդ (հիմնադրվել է 2023թ-ին):

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, շարունակական ռազմական հակամարտությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև, որոնց ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել են անորոշությունը գործարար միջավայրում: 2025թ. օգոստոսին Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և որը ներառում է հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը: Այնուամենայնիվ, հռչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական գործունեության վրա մնում են անորոշ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Խմբի՝ որպես ներդրումների կառավարչի նկատմամբ կիրառելի են նաև կարգավորող մարմինների պահանջները, որոնք վերաբերում են հաճախորդների հանդեպ ֆիդուցիար պարտականություններին, կառավարչի վարձատրությանը, համապատասխանության ապահովման համար իրականացվող գործողությունների ծրագրին, միջնորդության պայմանավորվածություններին, շահերի բախմանը, գովազդային գործունեությանը, կառավարչի և հաճախորդների միջև գործակալական խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրառումների վարման և հաշվետվողականության պահանջներին, բացահայտման պահանջներին և խարդախության կանխարգելման ընդհանուր դրույթներին:

Ֆինանսական կազմակերպությունները, որպես կանոն, պարտավոր են ունենալ փողերի լվացման դեմ պայքարի գործող ընթացակարգեր, իրականացնել աշխատակիցների վերապատրաստման հատուկ ծրագրեր և նշանակել աշխատակցի, ով պատասխանատու կլինի փողերի լվացման դեմ պայքարի պահանջների հետ համապատասխանության ապահովման համար: Բացի այդ, տվյալների գաղտնիության և պաշտպանության ոլորտում կանոնակարգային գործառույթները շարունակում են զարգանալ ողջ աշխարհում, ինչը հիմնականում պայմանավորված է տեխնոլոգիաների զարգացմամբ և այդ առումով տեղեկատվության արագ և լայնածավալ տարածման և օգտագործման հետ կապված մտահոգություններով: Խումբն՝ իր նկատմամբ կիրառելի չափով պետք է ապահովի համապատասխանությունը տեղեկատվությանը վերաբերող միջազգային, դաշնային և տեղական օրենքների և կանոնակարգերի պահանջներին: Ղեկավարությունը սահմանել է քաղաքականություններ, ընթացակարգեր և ներդրել է համակարգեր, որոնք նախատեսված են այդ կանոնակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(գ) Կարգավորող միջավայր

ՀՀ ԿԲ-ն վերահսկում է Խմբի գործունեությունը և կարող է իրականացնել կանոնավոր ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանությունը վերահսկելու նպատակով: Օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության բոլոր ոլորտները, ներառյալ վաճառքը և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառույթները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, աշխատակիցների շարունակական մասնագիտական վերապատրաստման պահանջները, փողերի լվացման դեմ պայքարին ուղղված միջոցառումները, «ճանաչիր քո հաճախորդին» քաղաքականությունը, գրառումների վարումը և հաշվետվողականությունը, տնօրենների, ղեկավար անձնակազմի և աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության հավաստում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ Խումբն ունի բավարար ռեսուրսներ տեսանելի ապագայում գործունեությունն անընդհատության հիմունքով շարունակելու համար: Այս գնահատումն իրականացնելիս ղեկավարությունը դիտարկել է տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ կանխատեսվող շահութաբերությունը, կարգավորող մարմնի կողմից կապիտալին ներկայացվող պահանջները և պահանջվող ֆինանսական միջոցները: Գնահատումն իրականացնելիս դիտարկվել են նաև ողջամտորեն հնարավոր բացասական տնտեսական սցենարները և դրանց հնարավոր ազդեցությունը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության և վերջինիս Դուստր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Գնահատումների փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 19-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

Իրական արժեքի լավագույն վկայությունը տրամադրում է ակտիվ շուկայում գնանշվող գինը: Այդ գնի բացակայության դեպքում ղեկավարությունն օգտագործում է գնահատման այլ մեթոդներ, մասնավորապես՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում նմանատիպ գործիքների հետ համեմատության մեթոդը:

Իրական արժեքի չափում

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործվող ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ*. նույնական գործիքների համար ակտիվ շուկաների գնանշվող գները (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ*. ակտիվի կամ պարտավորության համար ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող) դիտելի ելակետային տվյալներ, բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գների:
- *3-րդ մակարդակ*. ակտիվների և պարտավորությունների ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի փոփոխություններ

Խումբը ժամկետից շուտ չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ նոր ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ առաջին անգամ կիրառվում են 2025թ-ին, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

6. Եկամուտ կառավարման վճարներից

Խումբը ստանում է կառավարման վճար իր կողմից կառավարվող ֆոնդերից: Կառավարման վճարը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ սահմանված տարեկան դրույքաչափով: Կառավարման վճարի դրույքաչափերը սահմանվում են համապատասխան ֆոնդի կանոններով:

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Կառավարվող ֆոնդեր		
Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ	5,560,153	4,175,325
Ցե-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ	57,743	42,522
Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ	33,746	25,940
«Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդ	22,021	184,126
Ընդամենը եկամուտ կառավարման վճարներից	**5,673,663**	**4,427,913**

7. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Պահառուական վճարներ	309,659	269,291
Միջնորդավճարներ և վճարներ միջազգային բանկերին	5,838	4,585
Միջնորդավճարներ և վճարներ տեղական բանկերին և այլ կազմակերպություններին	578	1,452
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	**316,075**	**275,328**

8. Այլ գործառնական ծախսեր

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Մասնագիտական ծառայություններ	1,128,934	873,064
Աշխատավարձ	647,570	504,013
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	251,909	191,360
Կապի, մարքեթինգային և հարակից ծառայություններ	91,306	112,961
Մաշվածություն և ամորտիզացիա	70,536	65,422
Գործուղման և անձնակազմի գծով այլ ծախսեր	39,101	30,455
Նվիրատվություններ	19,113	22,878
Աուդիտորական ծառայությունների արժեքը	15,600	15,600
Այլ	197,244	87,617
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	**2,461,313**	**1,903,370**

9. Շահութահարկ

Խումբը գնահատում և հաշվառում է իր ընթացիկ վճարվելիք շահութահարկը, իր ակտիվների և պարտավորությունների հարկման բազան հարկերի մասին ՀՀ օրենքների համաձայն, որոնց պահանջները կարող է տարբերվել ՖՀՄՍ պահանջներից:

Խմբի նկատմամբ մշտապես կիրառելի են որոշակի հարկային տարբերություններ, որոնք առաջանում են որոշակի ծախսերը որպես հարկերից չնվազեցվող և որոշակի եկամուտները որպես շահութահարկի նպատակներով չհարկվող դիտարկելու հետևանքով:

Հետաձգված հարկերը ներկայացնում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների զուտ հարկային հետևանքները: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավոր տարբերությունները հիմնականում պայմանավորված են եկամուտների և ծախսերի ճանաչման տարբեր մեթոդներով/ժամկետներով, ինչպես նաև որոշ ակտիվների հարկման բազայի և հաշվեկշռային արժեքի տարբերություններից առաջացող ժամանակավոր տարբերություններով:

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է 18% դրույքաչափով (2024թ-ին՝ 18%):

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Շահույթում կամ վնասում ճանաչված ընթացիկ շահութահարկ	541,898	418,580
Ժամանակավոր տարբերությունների առաջացման և վերացման արդյունքում ձևավորված հետաձգված հարկի գծով օգուտ՝ ճանաչված շահույթում կամ վնասում	(12,791)	(8,220)
Շահութահարկի գծով ծախս	**529,107**	**410,360**
Շահութահարկի համադրում		
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	3,265,164	2,373,389
Շահութահարկ՝ հաշվարկված օրենքով սահմանված 18% դրույքաչափով	587,730	427,210
Չհարկվող եկամուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով զուտ օգուտից	(53,332)	(36,198)
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր արտարժույթի փոխանակումից	(10,941)	14,395
Նվիրատվություններին վերաբերող չնվազեցվող ծախսեր	-	2,113
Այլ չնվազեցվող ծախսեր	5,650	2,840
Շահութահարկի գծով ծախս՝ հաշվարկված արդյունավետ դրույքաչափով	**529,107**	**410,360**
Շահութահարկի արդյունավետ դրույքաչափով	**16.20%**	**17.29%**

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը:

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	**31 դեկտեմբերի 2024թ.**
Հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ), ներառյալ.		
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(20,279)	(17,866)
Վարձակալության գծով պարտավորություններ	22,080	20,023
Չօգտագործված արձակուրդի պահուստ	18,158	14,876
Պարգևավճարների պահուստ	25,229	16,161
Մասնագիտական ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	2,808	2,808
Հիմնական միջոցներ	3,633	2,836
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**51,629**	**38,838**

2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների հետաձգված հարկային ակտիվների փոփոխությունները՝ համապատասխանաբար 12,791 հազար դրամի և 8,220 հազար դրամի չափով, ճանաչվել են շահույթում կամ վնասում:

10. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Գրասենյակային գույք	Համակարգչային սարքավորումներ	Այլ գրասենյակային սարքավորումներ	Վարձակալված միջոցների բարելավում	Փոխադրամիջոցներ	Ծրագրային ապահովում	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	66,078	32,140	11,142	60,393	28,100	1,181	199,034
Ավելացումներ	724	5,182	1,294	-	-	2,167	9,367
Օտարումներ	(133)	-	-	-	-	-	(133)
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**66,669**	**37,322**	**12,436**	**60,393**	**28,100**	**3,348**	**208,268**
Ավելացումներ	305	11,369	2,040	-	36,000	1,199	50,913
Օտարումներ	(107)	(5,732)	-	-	-	-	(5,839)
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**66,867**	**42,959**	**14,476**	**60,393**	**64,100**	**4,547**	**253,342**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	22,362	25,173	5,272	17,090	14,576	1,103	85,576
Մաշվածության և ամորտիզացիայի գումար	10,118	5,861	1,639	9,871	3,513	1380	32,382
Օտարումներ	(8)	-	-	-	-	-	(8)
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**32,472**	**31,034**	**6,911**	**26,961**	**18,089**	**2,483**	**117,950**
Մաշվածության և ամորտիզացիայի գումար	11,003	6,236	2,133	9,870	6,725	664	36,631
Օտարումներ	(107)	(5,732)	-	-	-	-	(5,839)
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**43,368**	**31,538**	**9,044**	**36,831**	**24,814**	**3,147**	**148,742**
Հաշվեկշռային արժեք							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**43,716**	**6,967**	**5,870**	**43,303**	**13,524**	**78**	**113,458**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**34,197**	**6,288**	**5,525**	**33,432**	**10,011**	**865**	**90,318**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**23,499**	**11,421**	**5,432**	**23,562**	**39,286**	**1,400**	**104,600**

11. Այլ ակտիվներ

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ստացվելիք կառավարման վճարներ	550,143	403,978
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**550,143**	**403,978**
Ապրանքների և ծառայությունների համար տրված կանխավճարներ	25	16,308
Այլ	17,098	10,717
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**17,123**	**27,025**
Ընդամենը այլ ակտիվներ	**567,266**	**431,003**

Ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակով այլ ֆինանսական ակտիվների մնացորդները դասվում են 1-ին փուլ: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստն էական գումար չի կազմում:

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համապատասխանաբար 333,150 հազար դրամ և 333,360 հազար դրամ գումարով դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում գործող բանկերում: Ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակով դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդները դասվում են 1-ին փուլ: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստն էական գումար չի կազմում:

Արժութային և պարտքային ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված են Ծանոթագրություն 19-ում:

13. Վարձակալություն

Խումբը վարձակալում է գրասենյակի տարածքը: Վարձակալության սկզբնական ժամկետը 72 ամիս էր: 2025թ. ընթացքում վարձակալության ժամկետը երկարաձգվել է ևս 48 ամսով:

(i) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	99,255	132,295
Տարվա մաշվածության գումար	(33,905)	(33,040)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների փոփոխություն	47,386	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**112,736**	**99,255**

(ii) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով	11,656	13,675

(iii) Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված գումարներ

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալության գծով	**46,140**	**44,044**

(iv) Վարձակալության գծով պարտավորություններ

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	111,238	141,607
Տոկոսային ծախս	11,656	13,675
Վարձակալության գծով պարտավորությունների փոփոխություններ	47,386	-
Այլ փոփոխություններ	(1,476)	-
Վարձավճարներ	(46,140)	(44,044)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**122,664**	**111,238**

14. Կապիտալ և պահուստներ

Խմբի կանոնադրական կապիտալը 650,000 հազար դրամ է և կազմված է 650,000 բաժնեմասից, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1,000 դրամ:

Խմբի մասնակիցներն են «Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ» ՍՊԸ-ն (գրանցված Շոթենֆելդգասե 20, 1070 Վիեննա, Ավստրիա հասցեով, գրանցման համար՝ FN 55148a) և «Ամպեգա Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն (գրանցված Շառլ դը Գոլի փլաթց 1, 50679 Քյոլն, Գերմանիա հասցեով, գրանցման համար՝ HRB 61047):

Ստորև ներկայացված է յուրաքանչյուր մասնակցի մասնակցության չափը Խմբի կանոնադրական կապիտալում 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Մասնակից	**Մասնակցության չափը**	**%**
«Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ» ՍՊԸ	486,850	74.90%
«Ամպեգա Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ	163,150	25.10%
Ընդամենը կանոնադրական կապիտալ	**650,000**	**100%**

ԲԱժենամասերն իրավունք են տալիս քվեարկել մեկ բաժնեմաս՝ մեկ ձայն սկզբունքով և ստանալ շահաբաժիններ:

Մասնակիցների միջև բաշխման ենթակա Խմբի պահուստը սահմանափակվում է ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում բացահայտված կուտակված չբաշխված շահույթի գումարով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կուտակված շահույթը կազմել է 2,946,075 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,173,018 հազար դրամ):

2025թ. մայիսի 30-ին Խումբը հայտարարել է 1,963,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ (առանց ոչ ռեզիդենտի շահութահարկի): 2025թ. հունիսի 6-ին վճարվել են 1,864,850 հազար դրամ (4,238 հազար եվրո) գումարով շահաբաժիններ և 98,150 հազար դրամ գումարով ոչ ռեզիդենտի շահութահարկ: 2024թ. ընթացքում հայտարարվել էին 2,100,000 հազար դրամ ընդհանուր գումարով շահաբաժիններ: 2024թ. հունիսի 13-ին և 2024թ. հունիսի 27-ին վճարվել են 1,995,000 հազար դրամ (4,733 հազար եվրո) ընդհանուր գումարով շահաբաժիններ և 105,000 հազար դրամ գումարով ոչ ռեզիդենտի շահութահարկ:

15. Կապիտալի կառավարում

Խումբը կառավարում է իր կապիտալը գործունեություն անընդհատության հիմունքով շարունակելու կարողությունն ապահովելու համար՝ միաժամանակ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել շահառուների եկամուտները: Խմբի կապիտալը ներառում է սեփական կապիտալը, որը բաղկացած է թողարկված կապիտալից և չբաշխված շահույթից, որոնք ներկայացված են սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունում: Խմբի կապիտալի ռիսկի կառավարման քաղաքականությունն, ընդհանուր առմամբ, մնացել է անփոփոխ 2025թ. և 2024թ. ընթացքում:

Խմբի կապիտալի համարժեքության ցուցանիշը վերահսկվում է օգտագործելով, ի թիվս այլ միջոցների, ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները: ՀՀ ԿԲ-ի կանոնակարգ 10/02-ի համաձայն՝ Խմբի ընդհանուր կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չպետք է պակաս լինի 500,000 հազար դրամից՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա միջին օրական հաշվարկով: ՀՀ ԿԲ-ի կանոնակարգ 10/02-ի համաձայն, եթե պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող պորտֆելի զուտ ակտիվների արժեքը գերազանցում է հարյուր միլիարդ ՀՀ դրամը, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է հինգ հարյուր միլիոն ՀՀ դրամի և հարյուր միլիարդ ՀՀ դրամը գերազանցող գումարի 0.02 տոկոսի հանրագումարի չափով:

Խմբի կապիտալի համապատասխանում է սահմանված նվազագույն չափին:

16. Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված ծախսեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	**31 դեկտեմբերի 2024թ.**
Այլ ֆինանսական պարտավորություններ		
Մասնագիտական ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	127,888	98,885
Վճարվելիք պահառուական վճարներ	29,936	24,306
Այլ վճարվելիք գումարներ	2,677	983
	160,501	**124,174**
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Պարգևավճարների պահուստ	140,159	82,644
Չօգտագործված արձակուրդի պահուստ	100,881	87,144
Նվիրատվությունների գծով պահուստ	57,648	96,913
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	54,985	20,637
Այլ հաշվեգրումներ	15,619	18,249
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**369,292**	**305,587**
Ընդամենը կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված ծախսեր	**529,793**	**429,761**

17. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	**31 դեկտեմբերի 2024թ.**
Խմբի կողմից կառավարվող ֆոնդերում փայեր՝		
Յե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական եկամտային կենսաթոշակային ֆոնդ	3,089,858	1,501,786
«Յե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդ	186,141	64,359
Յե-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ	79,658	70,062
Յե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ	58,236	52,430
Ընդամենը	**3,413,893**	**1,688,637**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	42,017	27,410
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**3,455,910**	**1,716,047**

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են Խմբի ներդրումները ֆոնդերի փայերում, որոնք չունեն պայմանագրով սահմանված մարման ժամկետներ:

18. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Զուտ օգուտ ֆոնդերում փայերի իրական արժեքի փոփոխություններից	295,268	200,922
Այլ	1,020	178
Ընդամենը զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով	**296,288**	**201,100**

19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն տարբեր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի որոշման համար Խմբի կողմից կիրառվող մեթոդների վերաբերյալ:

Խմբի՝ կրկնվող հիմունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը

Խմբի որոշ ֆինանսական ակտիվներ չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Խմբի ֆինանսական ակտիվների իրական արժեքի որոշման սկզբունքները (մասնավորապես՝ գնահատման մեթոդը(ները) և օգտագործված ելակետային տվյալները):

Ֆինանսական ակտիվներ	**Իրական արժեքը առ**		**Իրական արժեքի հիերարխիա**	**Գնահատման մեթոդ(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)**
	31 դեկտեմբերի 2025թ.	**31 դեկտեմբերի 2024թ.**		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
Փայեր ֆոնդերում	3,413,893	1,688,637	2-րդ մակարդակ	Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների վերջին հրապարակված արժեքը՝ հաշվետու ամսաթվի դրությամբ
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	22,285	7,678	2-րդ մակարդակ	Բաժնետոմսի վերջին հրապարակված գինը
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	19,732	19,732	3-րդ մակարդակ	Զեղչված դրամական հոսքերի մոդել

Ղեկավարությունը կիրառում է դատողություններ ֆինանսական գործիքներն ըստ իրական արժեքի հիերարխիայի դասակարգելու համար: Գնահատման ելակետային տվյալների կարևորությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական չափման նկատմամբ:

Խմբի՝ կրկնվող հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը (որոնց համար սակայն պահանջվում են իրական արժեքի բացահայտումներ)

Հաշվի առնելով կրկնվող հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթը՝ ղեկավարությունը գտնում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրական արժեքին: Կիրառելի լինելու դեպքում, համապատասխան ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրություններում բացահայտվում է լրացուցիչ տեղեկատվություն իրական արժեքի որոշման հիմքում ընկած ենթադրությունների վերաբերյալ, սակայն, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունների կիրառումը, իրական արժեքը չպետք է դիտարկվի որպես իրացման արժեք՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման պահին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (Ծանոթագրություն 19 (բ) (ii)),
- իրացվելիության ռիսկ (Ծանոթագրություն 19 (բ) (iii)),
- շուկայական ռիսկ (Ծանոթագրություն 19 (բ) (iv)):

Ռիսկերի կառավարման ընդհանուր ծրագրի շրջանակում Խումբը հաշվի է առնում Հայաստանի ֆինանսական շուկայի անկանխատեսելիությունը և ոչ արդյունավետությունը և ձգտում է նվազագույնի հասցնել հնարավոր բացասական ազդեցությունն իր ֆինանսական արդյունքների վրա: Խմբի վերադաս ղեկավարությունը վերահսկում է այդ ռիսկերի կառավարումը, և ֆինանսական ռիսկերին ենթարկվող գործունեությունը կառավարվում է համապատասխան քաղաքականությունների և ընթացակարգերի միջոցով՝ նպատակ ունենալով ապահովել, որպեսզի ֆինանսական ռիսկերը հայտնաբերվեն, գնահատվեն և կառավարվեն Խմբի քաղաքականության համաձայն:

Խումբը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերին: Այդ ռիսկերից յուրաքանչյուրի կառավարման քաղաքականությունն ամփոփված է ստորև:

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի ստեղծման և հսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ձևավորել կանոնակարգված և արդյունավետ հսկողության միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է հաճախորդի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի կողմից պայմանագրային պարտականությունները չկատարելու դեպքում: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Ստորև ներկայացված է ակտիվների հետ կապած պարտքային ռիսկին ենթարկվածությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2025թ. հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2024թ. հազ. դրամ**	**Երկիր**	**Վարկանիշ**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	331,544	253,154	Հայաստան	Ba3
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,606	542	Ավստրիա	A1
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	79,564	Հայաստան	Վարկանիշ չունեցող
Ժամկետային ավանդ	-	958,834	Հայաստան	Ba3
Այլ ֆինանսական ակտիվներ	550,143	403,978	Հայաստան	Վարկանիշ չունեցող
Տրամադրված փոխառություններ	58,529	30,268	Հայաստան	Վարկանիշ չունեցող
	941,822	**1,726,340**		

Վարկանիշները հիմնված են «Moody's» գործակալության վարկանիշային համակարգի վրա: Խմբի գնահատմամբ վարկանիշ չունեցող ֆինանսական ակտիվների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Moody's» գործակալության վարկանիշային համակարգի B1 և B2 արտաքին վարկանիշներին:

Հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների մինչև մարումը մնացած պայմանագրային ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները և չեն ներառում հաշվանցման պայմանագրերի ազդեցությունը:

31 դեկտեմբերի 2025թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Մինչև 1 ամիս**	**1-6 ամիս**	**6-12 ամիս**	**1-5 տարի**
Ֆինանսական պարտավորություններ						
Վարձակալության գծով պարտավորություններ	122,664	163,635	6,382	16,243	19,721	121,289
Այլ ֆինանսական պարտավորություններ	160,501	160,501	160,501	-	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**283,165**	**324,136**	**166,883**	**16,243**	**19,721**	**121,289**

31 դեկտեմբերի 2024թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Մինչև 1 ամիս**	**1-6 ամիս**	**6-12 ամիս**	**1-5 տարի**
Ֆինանսական պարտավորություններ						
Վարձակալության գծով պարտավորություններ	111,238	131,265	3,693	18,751	22,728	86,093
Այլ ֆինանսական պարտավորություններ	124,174	124,174	124,174	-	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**235,412**	**255,439**	**127,867**	**18,751**	**22,728**	**86,093**

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների, փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց օպտիմալ եկամտաբերություն:

Արժութային ռիսկ

Խումբը ենթարկվում է արժութային ռիսկին ՀՀ դրամից տարբեր արժույթով արտահայտված դրամական միջոցների և դրանց համարժեքների և առևտրական կրեդիտորական պարտքերի հետ կապված: Այդ գործառնություններն հիմնականում արտահայտված են եվրոյով:

Ենթարկվածություն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժութային ռիսկին:

հազ. դրամ	**Եվրոյով արտահայտված 2025թ.**	**Եվրոյով արտահայտված 2024թ.**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների	12,189	11,760
Բանկային ավանդներ	-	958,834
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**12,189**	**970,594**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		
Այլ ֆինանսական պարտավորություններ	127,888	98,885
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**127,888**	**98,885**
Զուտ ենթարկվածություն	**(115,699)**	**871,709**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
1 եվրո	437.42	424.88	449.01	413.89

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) եվրոյի նկատմամբ կազդեր եվրոյով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և սեփական կապիտալի և մինչև հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Փոխարժեքային տարբերություններից եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ, և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	2025թ.		2024թ.	
	Շահույթ կամ վնաս/ սեփական կապիտալ		Շահույթ կամ վնաս/ սեփական կապիտալ	
	Աճ	Նվազում	Աճ	Նվազում
ՀՀ դրամի փոխարժեքի 20% փոփոխություն	23,140	(23,140)	(174,342)	174,342

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են միայն տրամադրված փոխառությունների վրա (2024թ-ին՝ ժամկետային ավանդների և տրամադրված փոխառությունների վրա): Այնուամենայնիվ, ղեկավարության գնահատմամբ Խմբի ենթարկվածությունը տոկոսադրույքային ռիսկին էական չէ:

Այլ գնային ռիսկեր

Խումբը ենթարկվում է գնային ռիսկերի ֆոնդերում փայերի հետ կապված: Փայերը ֆոնդերում պահվում են հիմնականում օրենսդրական, ռազմավարական և ներդրումային, այլ ոչ՝ առուվաճառքի նպատակներով: Խումբն այդ փայերի ակտիվ առք ու վաճառք չի իրականացնում:

Ստորև ներկայացված զգայնության վերլուծությունը հիմնված է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փայերի հետ կապված գնային ռիսկերին ենթարկվածության վրա:

Եթե մեկ փայի արժեքն աճեր/նվազեր 5%-ով, 2025թ. շահույթը կաճեր/կնվազեր 172,795 հազար դրամով իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունների արդյունքում (2024թ. շահույթը կաճեր/կնվազեր 85,802 հազար դրամով):

20. Հանձնառություններ

Կառավարվող ֆոնդերում համատեղ ներդրում կատարելու հանձնառություններ

Օրենսդրության պահանջների համաձայն՝ Խումբը պարտավոր է 1% համատեղ ներդրում ունենալ իր կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերում, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆոնդի զուտ ակտիվների արժեքը գերազանցում է 1,000,000 հազար դրամը, և 0.15%՝ ներդրումային ֆոնդերում: Այս և այլ օրենսդրական և նորմատիվ պահանջների իրականացումը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը պահպանել է վերը նշված պահանջները:

21. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբն ամբողջությամբ չի ապահովագրել իր ակտիվները, այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով:

(բ) Դատական վարույթներ

Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են ազդեցություն ունենալ իր գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այդ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել զարգացած երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համարժեքորեն է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել ղեկավարության մեկնաբանություններից:

22. Կապակցված կողմեր

(ա) Գործարքներ ղեկավարության հետ

Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է այլ գործառնական ծախսերի կազմում (տես Ծանոթագրություն 8):

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Աշխատավարձ և պարգևավճարներ	**285,920**	**255,510**

Տարվա ընթացքում Խորհրդի անդամները ստացել են ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է այլ մասնագիտական ծառայությունների կազմում (տես Ծանոթագրություն 8):

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Խորհրդի անդամների հատուցում	**135,860**	**51,972**

Խմբի կողմից կառավարվող ֆոնդեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	**31 դեկտեմբերի 2024թ.**
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն		
Փայեր Խմբի կողմից կառավարվող ֆոնդերում	3,413,893	1,688,637
Ստացվելիք կառավարման վճարներ	550,143	403,978

հազ. դրամ	**2025թ.**	**2024թ.**
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն		
Եկամուտ կառավարման վճարներից	5,673,663	4,427,913
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով	295,268	200,922

23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

2026թ. հունվարին «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն ավելացրեց իր բաժանորդագրումը Յե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդում 500 միլիոն դրամով:

24. Չափման հիմունքներ

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես ներկայացված է ստորև հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների և Խմբի անդամ կազմակերպությունների համար:

(ա) Համախմբման հիմունքներ

(i) Դուստր ընկերություններ

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից հսկվող ընկերություններ են: Խումբը հսկողություն ունի կազմակերպության նկատմամբ, երբ այդ կազմակերպությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և կազմակերպության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ հսկողությունը սկսելու պահից մինչև հսկողության դադարեցումը:

(ii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

(բ) Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Այնուամենայնիվ, այն ֆինանսական ակտիվների համար, որոնք պարտքային առումով արժեզրկված են դարձել սկզբնական ճանաչումից հետո, տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամուտը կրկին սկսվում է հաշվարկվել համախառն հիմունքով:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի փոփոխությունը՝ զուտ շահույթի, թե՝ զուտ վնասի:

Եկամուտ կառավարման վճարներից

Պորտֆելի և այլ կառավարման վճարները ճանաչվում են հիմք ընդունելով ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն, ժամանակին համամասնորեն: Ակտիվների կառավարման վճարները հիմնված են կառավարվող ակտիվների ֆիքսված տոկոսի վրա և ճանաչվում են ժամանակի ընթացքում՝ ծառայությունները մատուցելիս:

Ակտիվների կառավարման վճարները հիմնված են Խմբի կողմից կառավարվող ֆոնդերում ներդրված հաճախորդի զուտ ակտիվների արժեքի օրական մնացորդների վրա:

Կառավարման վճարներից գծով ամբողջ եկամուտը ստացվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆոնդերից:

Խմբի կառավարման ներքո գտնվող ակտիվները չեն հանդիսանում Խմբի ակտիվներ և հետևաբար չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Խումբը չի ենթարկվում որևէ պարտքային ռիսկի այդ ներդրումների հետ կապված, քանի որ այն չի երաշխավորում այդ ներդրումները:

Եկամուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներից

Խումբը ներդրումներ է կատարում իր կառավարման ներքո գտնվող ֆոնդերի փայերում: Փայերը ճանաչվում են ակտիվ շուկայում գնանշված գներով կամ ձեռք բերված մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքով և հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտը կամ կորուստը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները և փոխարժեքային տարբերությունները, սակայն չի ներառում տոկոսների և շահաբաժինների տեսքով եկամուտը:

(գ) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(դ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ակտիվների և պարտավորությունների՝ ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքում, որը չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի և ո՛չ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այդ նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս մարելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը տվյալ պահին ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները միաժամանակ:

(ե) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Կառավարման վճարների գծով ստացվելիք գումարները սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ. բիզնես մոդելի գնահատում

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այդ գնահատումը լավագույնս արտացոլում է, թե ինչպես է գործունեությունը կառավարվում և ինչպես է այդ տեղեկատվությունը տրամադրվում ղեկավարությանը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառումը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, տոկոսային եկամտաբերության որոշակի մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետները այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են տվյալ ակտիվներով կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ռիսկերը, որոնք ազդում են բիզնես մոդելի վրա (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների վրա) և ինչպես են այդ ռիսկերը կառավարվում:
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այդ նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվներ. գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսներ

Այդ գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» ներառում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցումը և շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այդ դիտարկման ժամանակ գնահատվում է, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվն այլևս չբավարարի այդ պայմանը:

Գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- պայմանները, որոնք կարող են ճշգրտել պայմանագրային արժեկտրոնային տոկոսադրույքը, այդ թվում՝ փոփոխական տոկոսադրույքի պայմանները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում:

Ֆինանսական ակտիվներ. հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են կամ չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iv) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ մարել ֆինանսական ակտիվները և պարտավորությունները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(զ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և բանկերում պահվող մնացորդները իրենցից ներկայացնում են բանկերում պահվող դրամական միջոցները՝ երեք ամիս կամ պակաս ժամկետայնությամբ:

(է) Կանոնադրական կապիտալ

Մասնակիցների բաժնեմասերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Խմբի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

(ը) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2025թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը ժամկետից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) ՖՀՄՍ 18 *«Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»*

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութահարկ: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվում:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից մեկ ծանոթագրությունում:
- Տրամադրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

Ներկայումս Խումբը գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության, դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության կառուցվածքի և ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Խումբը նաև գնահատում է ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա, այդ թվում՝ այն հոդվածների համար, որոնք ներկայումս նշվում են որպես «այլ»:

(բ) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր և փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Բնական աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրեր (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)